րի եւ ամեհի գազանների հետ: Կարօն թէեւ այսպիսի քաջագործութիւններ չէր կատարում, բայց նա անում էր այն, որ մեր, երեխաներիս աչքերում աւելի մեծ նշանակութիւն ունէր:

Պատահում էին այսպիսի դէպքեր եւ այդ դէպքերը կրկնւում էին խիստ յաճախ: Ամէն երեկոյ, երբ աշակերտները դպրոցից վերադառնում էին իրանց տները, մահմեդականների փողոցներից անց կենալու ժամանակ, հաւաքւում էին թուրքերի, պարսիկների երեխաները եւ ծեծում էին հայ երեխաներին: Ես մինչեւ այսօր չեմ մոռացել մի երգ, որ հնարել էին նրանք եւ մեզ տեսնելու ժամանակ երգում էին: Նրա բովանդակութիւնը մօտաւորապէս այս էր. «հայը աղբի ջրաղաց է, պէտք է գցել նրան տոպրակի մէջ եւ խփել պատին, որ երկու աչքերն էլ միասին կուրանան»... Մենք ուրախ էինք լինում, երբ մեր վիրաւորանքը վերջանում էր այդ նախատական խօսքերով: Բայց նրանք ծեծում էին մեզ: Աշակերտները գանգատւում էին իրանց ծնողներին, բայց ի՞նչ կարող էին անել ծնողները: Մեծերը ծեծւում էին մեծերից, իսկ փոքրերը՝ փոքրերից...

Մի անգամ Կարօն ասաց մեզ.

— Գիտէ՞ք ինչ կայ, տղերք, այդ թուրքի լակոտները մեզ միշտ կը ծեծեն, քանի որ մենք նրանց առջեւից կը փախչենք: Պէտք է մենք էլ ցոյց տանք նրանց մեր ձեռքի զօրութիւնը:

Աշակերտներից շատերը հակառակեցին, թէ դա անկարելի բան է, թէ ինչպէ՞ս կարելի է թուրքի, պարսկի երեխայի վրայ ձեռք բարձրացնել:

— Ես չեմ ասում, որ մենք յարձակոենք նրանց վրայ, բայց երբ որ մեզ վրայ յարձակոելու լինեն, պէտք է պաշտպանոենք:

— Ինչո՞վ, — հարցրեց մէկը:

— Առաջ մեր մուշտիներով, — ասաց Կարօն, — իսկ երբ այդ չի օգնի, սկսեցէք քարերով:

Դարձեալ աշակերտներից շատերը չհամաձայնոեցան. տասն հոգի միայն ընդունեցին Կարօյի առաջարկութիւնը, որոնց թւում գտնւում էինք՝ ես, Ասլանը եւ Սագօն:

Կարօն կազմակերպեց իր փոքրիկ գունդը, ինքն առաջ ընկաւ, Ասլանին եւ Սագօյին կարգեց վերջապահ, իսկ ինձ կանգնեցրեց մէջտեղում, որովհետեւ ամենից փոքրն էի: Մեր գրպանները լիքն էին քարերի գնդակներով: Այսպէս սկսեցինք առաջ գնալ: Մեր ընկերներից մի քանիսը, որ չմիացան մեզ հետ, հեռոից հետեւում էին մեզ, որ տեսնեն, թէ ինչով կը վերջանայ այդ «յիմարութիւնը»...